ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԹԵՄԱՆԵՐՈՎ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹԻ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Ամբերդ» հետազոտական կենտրոնը հայտարարում է 2015 թ. ՀՀ նախարարությունների առաջարկած ներքոհիշյալ թեմաներով հետազոտական ծրագրերի ներքին դրամաշնորհների իրականացման մրցույթ.

1. Տարածաշրջանների սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացում համայնքների խոշորացման հնարավոր ազդեցությունը (ՀՀ տարածքային կառավարման նախարարություն)

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ: Վերլուծել ՀՀ տարածաշրջանների զարգացման վրա համայնքների չափի և հնարավոր խոշորացման ազդեցությունը: Բացահայտել ըստ տարածաշրջանների համայնքների խոշորացման և միջհամայնքային միավորումների ձևավորման առանձնահատկություններն ու սոցիալ-հոգեբանական գործոնները: Մշակել ըստ տարածաշրջանների համայնքների խոշորացման ծրագիր և վերջինիս իրականացման ճանապարհային քարտեզ: Ներկայացնել ծրագրի կազմակերպա-տնտեսական հիմնավորումը, իրավական ակտերում անհրաժեշտ փոփոխությունները և համայնքների խոշորացման շրջանակներում տարածաշրջանների սոցիալ-տնտեսական զարգացման ակնկալվող արդյունքները:

2. ՀՀ մարզերում փոքր և միջին բիզնեսի զարգացման ազդեցությունը աղքատության կրճատման վրա (ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն)

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ: Ուսումնասիրել ՀՀ մարզերում ՓՄՁ-ի զարգացման ներկա վիճակը և ազդեցությունը զբաղվածության մակարդակի բարձրացման, աղքատության հաղթահարման և միջին խավի ձևավորման վրա: Ըստ մարզերի վերլուծել ՓՄՁ ներգրավվածությունը տնտեսության ճյուղերում: Բացահայտել ՓՄՁ-ի զարգացման տարածաշրջանային և ճյուղային առանձնահատկությունները, պետական աջակցության համակարգը և խոչնդոտող գործոնները: Ներկայացնել ՓՄՁ-ի զարգացման խթանման և

իրավական դաշտի կատարելագործման ծրագրային դրույթները, ինչպես նաև դրանց իրականացման կառուցակարգերն ու զարգացման ճանապարհային քարտեզը:

3. Փոքր հիդրոէլեկտրակայանների շահագործման հետևանքով շրջակա միջավայրի և ջրային ռեսուրսների որակական փոփոխությունների տնտեսագիտական վերլուծությունը (ՀՀ բնապահպանության նախարարություն)

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ: Ընտրանքային կարգով ուսումնասիրել ՀՀ փոքր ՀԷԿ – երի տեխնիկական և տնտեսական պարամետրերի համապատասխանությունը բնապահպանական փորձաքննության պահանջներին: Դիտարկել փոքր ՀԷԿ-երի ներգործությունը շրջակա միջավայրի և ազդեցությունը ջրի որակական փոփոխությունների վրա: Ստացված արդյունքների հիման վրա կատարել տնտեսագիտական վերլուծություն և գնահատել հանրային օգուտն ու վնասը: Ներկայացնել առաջարկություններ և պայմաններ նոր փոքր ՀԷԿ-երի տեղաբաշխման, նախագծման և կառուցման վերաբերյալ: Երկարաժամկետ կտրվածքով գնահատել բնապահպանական հետևանքները և տնտեսական արդյունավետությունը:

4. Հանրակրթության ոլորտի ֆինանսավորման կառուցակարգերի կատարելագործումը և ըստ ՀՀ մարզերի բյուջետային հատկացումների արդյունավետության բարձրացման ուղիները (ՀՀ կրթության և գիտության նախարարություն)

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ: Կատարել ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ֆինանսավորման կարգի արդյունավետության վերլուծություն: Գնահատել ՀՀ մարզերում հանրակրթական ուսումնական հաստատություններին հատկացվող բյուջետային միջոցների իրական կարիքներին համապատասխանության աստիճանը: Ներկայացնել ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ֆինանսավորման կառուցակարգերի և օրենսդրական դաշտի կատարելագործման, ինչպես նաև բյուջետային հատկացումների արդյունավետության բարձրացման առաջարկություններ: Գնահատել առաջարկվող փոփոխությունների հնարավոր ազդեցությունը հանրակրթության որակի և արդյունավետության բարձրացման վրա: Մշակել առաջարկվող միջոցառումների իրականացման ճանապարհային քարտեզ:

5. ՀՀ տնտեսության վրա Եվրասիական տնտեսական միությանը անդամակցության ազդեցության գնահատումը (ՀՀ ֆինանսների նախարարություն)

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ: Վերլուծել ԵՏՄ տնտեսական աճի ներքին և արտաքին ներուժը և գնահատել դրա հնարավոր ազդեցությունը ՀՀ տնտեսական աճի վրա: Վերլուծել ԵՏՄ շրջանակներում փոխարինման էֆեկտի քաղաքականության վարման հնարավորությունը, ուղղությունները և գնահատել վերջինի հնարավոր ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա: Գնահատել ինտեգրացիոն կապերի հնարավոր խորացման ազդեցությունը ՀՀ տնտեսության ճյուղային կառուցվածքի վերափոխումների, առանձին ճյուղերի հավելաճի կամ անկման, դրանց արտահանման հնարավորությունների աճի կամ նվազման վրա: Գնահատել ԵՏՄ միասնական մաքսային սակագների ազդեցությունը ՀՀ ներքին շուկայում ներմուծվող ապրանքների հնարավոր գնաճի վրա: Միասնական մաքսային սակագներին անցնելու համատեքստում գնահատել ՀՀ տնտեսության առանձին ճյուղերի արտադրանքի իրացման հնարավորությունները և խոչընդոտները ԵՏՄ ներքին շուկայի սպառողական ու արդյունաբերական հատվածներում: Վերլուծել երրորդ երկրների արտադրողների՝ ՀՀ հետ նույնականացման (վերջիններին ապրանքային մակնիշներով Հայաստանքում արտադրանքի թողարկում, համատեղ ձեռնարկությունների հիմնում) և ԵՏՄ շուկայում հայկական նմանատիպ արտադրանքի իրացման ներուժը: Գնահատել միասնական արժույթի բացակայությամբ ու ԵՏՄ անդամ երկրների ազգային արժույթների կուրսերի տարբերություններով պայմանավորված խնդիրների ազդեցությունը միության ներքին շուկայում ՀՀ արտադրանքի գնային մրցունակության վրա: Գնահատել միասնական սահմանի ու տրանսպորտային ենթակառուցվածքների բացակայության ազդեցությունը միության շուկայում Հայկական արտադրանքի գնային մրցունակության վրա: Մշակել մաքսային միության շուկայում ՀՀ արտահանման ֆիզիկական ծավալների աճի և անվանացանկի ընդլայնման համալիր ռազմավարություն և դրա իրականացման ճանապարհային քարտեզ:

6. Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման քայլերի (ճանապարհային քարտեզ) մշակում (ՀՀ գյուղատնտեսության նախարարություն)

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ: Ուսումնասիրել գյուղատնտեսության ոլորտում ապահովագրության ներդրման միջազգային փորձը և ՀՀ-ում կիրառման հնարավորությունները: Գնահատել ապահովագրական ռիսկերը և դրանց կանխարգելման ու

մեղմացման հնարավորությունները: Հիմնավորել պետական աջակցությամբ գյուղատնտեսական ապահովագրության համակարգի ներդրման անհրաժեշտությունը և հնարավորությունները: Մշակել գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման ծրագիր և դրա իրականացման ճանապարհային քարտեզ: Հատկապես շեշտադրել ըստ փուլերի ՀՀ մարզերի, գյուղատնտեսական մշակաբույսերի և կենդանիների ընդգրկումը, ապահովագրության ձևի (բերքի, ծախսերի ապահովագրություն և այլն) ընտրությունը, ապահովագրավճարների տարեկան դրույքաչափերը, վնասի փոխհատուցման կարգը և չափերը, իրավական ակտերում անհրաժեշտ փոփոխությունները և լրացումները, ՄԺԾԾ-ում լրացուցիչ պետական աջակցության ծրագրի ներառումը, ապահովագրական պայմանագրի օրինակելի ձևի մշակումը և շահառուների ուսուցման հիմնական թեմաները:

7. ՀՀ արտահանման բազմազանեցման և աճի հնարավորությունները (ՀՀ էկոնոմիկայի նախարարություն)

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ: Գնահատել ՀՀ տնտեսության ճյուղերի միջազգայնացման ներկա վիճակը և արտահանման ներուժը: Գնահատել ՀՀ կառավարության արտահանման խթանման ռազմավարության արդյունավետությունը և ապահովված արդյունքների որակը: Իրական հատվածի, ծառայությունների ոլորտ և ՏՏ ոլորտների կտրվածքով գնահատել տնտեսության առանձին ճյուղերի տեխնոլոգիական հագեցվածության մակարդակը և մրցունակությունը զարգացած, զարգացող և թույլ զարգացած շուկաներում: Հստակեցնել նոր տեխնոլոգիաների ներդրման կարճաժամկետ ու միջինաժամկետ հնարավոր ազդեցությունը արտահանողների մրցունակության, արտադրական ու արտահանման ներուժի, արտահանման շահագրգռվածության բարձրացման, ինչպես նաև արտահանվող անվանացանկի բազմազանեցման վրա: Գնահատել նաև նոր տեխնոլոգիաների ներդրման հնարավոր ազդեցությունը արտահանմանը միտված նոր արտադրությունների հիմնման և զարգացման վրա: Արտահանող կազմակերպություններում անցկացվող հարցումների հիման վրա գնահատել արտահանման գործընթացի խթաններն ու խոչընդոտները, դրանց վերացման ներուժն ու միջոցները: Վերլուծել տրանսպորտային ենթակառուցվածքների բարելավման ազդեցությունն արտահանման վրա և գնահատել վերջինի ուղղությամբ անհրաժեշտ ներդրումների մեծությունը: Մշակել արտահանման խթանման ռազմավարության հայեցակարգային դրույթներ՝ մանրամասնելով խթանման ուղղությունները, մեթոդները,

գործիքները, պահանջվող ներդրումներն ու բյուջետային մուտքերի հնարավոր նվազումը կարճաժամկետում: Ներկայացնել առաջարկությունների փաթեթ և գնահատել դրանց ներդրման ազդեցությունը արտահանման ծավալների աճի, անվանացանկի ու աշխարհագրության դիվերսիֆիկացման և ՀՀ տնտեսության հետագա զարգացման ու տնտեսական աճի վրա:

8. Սփյուռքի դերը ՀՀ տնտեսության զարգացման գործում (ՀՀ սփյուռքի նախարարություն)*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ: Վերլուծել ՀՀ տնտեսության առանձին ոլորտներում սփյուռքահայ գործարարների ներդրումային ծրագրերը և սփյուռքահայ համայնքների նպաստը արտաքին շուկա հայրենական ապրանքների արտահանման գործում: Վերլուծել սփյուռքի համայնքների ֆինանսական, մարդկային ներուժը և շարժառիթները ՀՀ-ում ներդրումների ներգրավման և արտերկրում հայրենական արտադրանքի դիրքավորման գործում: Հանգամանորեն և հանրամատչելի ձևով ներկայացնել առավել կարևոր և ազգանպաստ ծրագրերը, ձեռքբերումները և հանրային արձագանքը (ընկալումը): Բացահայտել արտաքին ներդրումների առկա խոչնդոտները և խթանման ուղիները: Ներկայացնել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կազմակերպական և ինստիտուցիոնալ բարեփոխման, ինչպես նաև միջոցների առավել նպատակային օգտագործման առաջարկություններ:

***Թեման մրցութային չէ, իրականացվում է «Ամբերդ» հետազոտական կենտրոնի աշխատակազմի կողմից, առանց լրացուցիչ վարձատրության:**

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ: Հետազոտության համար սահմանվող ժամկետը 7 ամիս է: Հետազոտական խումբը պետք է ձևավորվի մեկից ավելի ամբիոնների՝ տվյալ թեմայի տեխնիկական առաջադրանքին համապատասխանող փորձ և գիտելիքներ ունեցող մասնագետներից: Կատարողների թվի ¼-ը ընդգրկել մագիստրանտ և/կամ ասպիրանտ: Թեմայի ղեկավարը և հետազոտողները (բացառությամբ մագիստրանտների) պետք է ներկայացնեն տվյալ թեմային առնչվող գիտական հրապարակումներ, իսկ ասպիրանտների հետազոտական թեման պետք է մոտ լինի մրցութային թեմային: Յուրաքանչյուր թեմայի բյուջեն չպետք է գերազանցի 6 մլն դրամը (գործուղման ծախսերը ներառյալ): Վճարումը կատարվելու է փուլերով, նախատեսված աշխատանքների կատարման վերաբերյալ "Ամբերդ" հետազոտական կենտրոնի ծրագրի ղեկավարի և համապատասխան նախարարության դրական եզրակացության առկայությամբ:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ: Միջանկյալ և վերջնական արդյունքների քննարկում (2 սեմինար), հետազոտության ամփոփ հաշվետվության ներկայացում (ներառյալ գործնական առաջարկությունները և դրանց իրավական, տեխնիկական ու տնտեսական հիմնավորումները) կոլեկտիվ մենագրության կամ գիտական զեկույցի հրապարակում,:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ: Հետազոտության հաշվետվությունը չի կարող գերազանցել 100 մեքենագիր էջը (ներառյալ հետազոտության օբյեկտին առնչվող վիճակագրական հավելվածները): Վերջինը պարտադիր պետք է ներառի հետևյալ բաժինները.

1. **Հետազոտության մեթոդաբանությունը և նկարագիրը:** Այս բաժնում մինչև 10 տպագիր էջի սահմաններում ենթադրվում է մանրամասն ներկայացնել՝
   - Հետազոտության համառոտ նկարագրությունը (հետազոտության ժամկետները, հետազոտության օբյեկտը և ընդգրկած բնագավառները):
   - Հետազոտության մեթոդաբանության և կիրառված գործիքների նկարագիրը:
   - Հետազոտության ընտրանքի նկարագիրը:
   - Հետազոտության տեղեկատվական ապահովման նկարագիրը:
   - Հետազոտության ելակետային դրույթների (նաև գնահատման ու հաշվարկման կիրառված մեթոդների) նկարագիրը:

2. **Հետազոտությամբ ապահովված հիմնական արդյունքների նկարագիրը:** Այս բաժնում մինչև 30 մեքենագիր էջի սահմաններում ներկայացնել հետազոտվող օբյեկտի դրվածքը Հայաստանում և այլ երկրներում (եթե դա անհրաժեշտ է): Օբյեկտի դրվածքը պետք է ներառի վերջինի տնտեսական, տեխնիկական, իրավական-քաղաքական, սոցիալ-մշակութային, ժողովրդագրական, ռեսուրսային ապահովվածության ասպեկտների, ինչպես նաև միջազգային առաջավոր փորձի վերլուծության արդյունքները:
3. **Հետազոտության օբյեկտի ուժեղ, թույլ կողմերի, զարգացման հնարավորությունների, մարտահրավերների, խոչընդոտների և միջազգային փորձի ներդրման հետևանքների նկարագիրը:** Այս բաժնում մինչև 20 մեքենագիր էջի սահմաններում ներկայացնել հետազոտության արդյունքում խմբի առաջադրած տեսակետները՝ հետազոտության օբյեկտի զարգացման հնարավորությունների, մարտահրավերների, խոչընդոտների և միջազգային փորձի ներդրման հետևանքների վերաբերյալ:
4. **Առաջարկությունների փաթեթը և հիմնավորումները:** Այս բաժնում մինչև 20 մեքենագիր էջի սահմաններում ներկայացնել հետազոտության օբյեկտի ներկա դրվածքի բարելավմանը (լավարկմանը) միտված հիմնական առաջարկությունները (ըստ ուղղությունների), դրանց տեխնիկական-տնտեսական հիմնավորումները և վերջինների կիրառման հնարավոր ազդեցությանն առնչվող կանխատեսումները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱՆԿՅԱԼ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՐՏԱԴԻՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ: Հետազոտության միջանկյալ արդյունքների քննարկումն իրականացվում է թեմայի ղեկավարի և կենտրոնի կողմից հաստատված ժամանակացույցի և հաշվետվության ձևի համաձայն: Միջանկյալ հաշվետվությունը պետք է ներառի ինչպես խմբի կոլեկտիվ հետազոտության ամփոփ արդյունքները, այնպես էլ խմբի ղեկավարի կողմից հետազոտության տվյալ փուլում խմբի յուրաքանչյուր անդամին պատվիրակված աշխատանքների կատարման տեղեկանքները:

Ծանոթություն: Հետազոտական թեմաների հայտերի լրացման պահանջները և մրցույթի անցկացման կարգը ներկայացվում է սյուն հայտարարությանը կից թիվ 1 և թիվ 2 հավելվածներում:

Հավելված 1.

Հաստատված է <<ԱՄԲԵՐԴ>> հետազոտական
կենտրոնի խորհրդի կողմից
արձանագրություն թիվ 2, «26 »դեկտեմբերի 2014թ.

ԿԱՐԳ
ՀՀ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ «ԱՄԲԵՐԴ» ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՆԵՐՔԻՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹԻ

1. Մրցույթի նպատակը և խնդիրները

1.1. Մրցույթի նպատակն է ՀՊՏՀ-ի հետազոտական ներուժն ուղղորդել ՀՀ Կառավարության (նախարարությունների) կողմից ներկայացված առավել հրատապ հետազոտական ծրագրերի իրականացմանը և դրանք փոխկապակցել կրթական ծրագրերի հետ:

1.2. Մրցութային կարգով իրականացվող հետազոտական ծրագրերին առաջադրվում են հետևյալ խնդիրները.

- Նպաստել ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման առավել կարևոր հիմնահարցերի գիտականորեն հիմնավորված լուծմանը,
- Ստեղծել նախադրյալներ հետազոտության արդյունքների առևտրայնացման և արտաքին պատվերների ինստիտուտի զարգացման համար,
- Փոխկապակցել ՀՊՏՀ ուսումնական և հետազոտական գործունեությունը, ընդլայնել երիտասարդ հետազոտողների ներգրավվածությունը:

2.Մասնակիցներին ներկայացվող պահանջները

2.1.Մրցույթի պայմաններին և տեխնիկական առաջադրանքի պահանջներին համապատասխան ներկայացնել մասնակցության հայտ (հավելված 2.),

2.2. Խմբի ղեկավարը և անդամները պետք է լինեն ՀՊՏՀ-ի աշխատողներ և ուսանողներ,

2.3. Խմբի անդամների թիվը, ըստ հետազոտական ծրագրի առանձնահատկության, որոշում է խմբի ղեկավարը: **Խմբում պետք է ներգրավված լինեն մեկից ավելի ամբիոնի դասախոսներ:**

2.4. Խմբի անդամները (ներառյալ ղեկավարը) չեն կարող ընդգրկվել Մրցույթին ներկայացված մեկից ավելի Հայտերում:

2.5. Խմբի անդամների ¼-ը ընդգրկել ասպիրանտ և/կամ մագիստրատուրայի ուսանող:

2.6. Խմբում չեն կարող ընդգրկվել գիտական թեմայի իրականացման ժամանակահատվածում ՀՊՏՀ-ի ներքին դրամաշնորհներով իրականացվող հետազոտական ծրագրերի ղեկավարներն ու կատարողները:

3.Հայտերի լրացման կարգը և ներկայացումը

3.1. Հայտը ներկայացնել համացանցային առցանց (on-line) ռեժիմով՝ գրանցվելով «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հասցեում info@amberd.am, մինչև 2015 թվականի փետրվարի 10-ը ներառյալ (մինչև՝ Երևանի ժամանակով ժամը 18:00):

3.2. Հայտը ներկայացնել գիտական թեմայի տեսքով՝ սույն հրավերի հավելված N 2-ում *նշված ձևաթղթերին համապատասխան:*

3.3. Հայտի տեքստային մասը ներկայացնել 1,5 տողամեջ հեռավորությամբ, 12 չափի «Unicode» տառատեսակով, էջերի բոլոր կողմերից թողնել 2.5 սմ լուսանցք:

4.Հայտերի գիտական փորձաքննություն

4.1. Մրցույթի պայմաններին բավարարող Հայտերը տրամադրվում են համապատասխան նախարարությունների և անկախ փորձագետների գրավոր կարծիք ստանալու և «Ամբերդ» հետազոտական կենտրոնի խորհրդին ֆինանսավորման երաշխավորելու համար:

4.2. Գիտական փորձաքննության ժամանակ գնահատվում է՝ Հայտի գիտական կամ գիտատեխնիկական նորույթը և արդիականությունը, գիտության տվյալ բնագավառում խմբի ղեկավարի և կատարողների ձեռքբերումները և նրանց մասնագիտական որակավորման համապատասխանությունը գիտական թեման իրականացնելու համար, գիտական թեմայի իրականացման նախադրյալները, ծավալը և դրա իրականացման ժամկետները, ֆինանսական արդյունավետությունը և գիտության տվյալ բնագավառի առանձնահատկություններից բխող այլ հարցեր:

4.3. Գիտական փորձաքննություն իրականացնող մասնագետը(ները) կարծիքին կից ներկայացնում է գնահատման թերթիկ (աղյուսակ 1), որտեղ 4.2. կետում նշված

յուրաքանչյուր հարցի պատասխանը տրվում է գնահատականի միջոցով, առավելագույնը 5 միավոր (0.5 միավորի ճշտությամբ), հետևյալ սանդղակով.

0 միավոր – հարցի պատասխանը բացակայում է կամ այն չի կարող որոշվել տեղեկության բացակայության պատճառով,

1 միավոր – հարցի պատասխանը ներկայացված է մակերեսորեն և անորոշ,

2 միավոր – հարցի պատասխանը բավարար չէ ամբողջական կարծիք կազմելու համար,

3 միավոր – հարցի պատասխանն, ընդհանուր առմամբ, բավարարում է հարցի պահանջներին, բայց կան զգալի անհամապատասխանություններ, որոնք շտկելի են,

4 միավոր – հարցի պատասխանը որոշակի վերապահումներով համապատասխանում է առաջադրված պահանջներին,

5 միավոր – հարցի պատասխանը լիովին համապատասխանում է հարցի պահանջներին և թերություններն աննշան են:

Աղյուսակ 1

Հայտի գնահատման թերթիկ

Հ/հ	Գնահատման չափանիշները	գնահատականը, միավոր
1.	Թեմայի արդիականությունը	
2.	Գիտատեխնիկական նորույթը	
3.	Տվյալ բնագավառում խմբի ղեկավարի գիտական ձեռքբերումները*	
4.	Տվյալ բնագավառում կատարողների գիտական ձեռքբերումները*	
5.	Խմբի ղեկավարի մասնագիտական որակավորման համապատասխանությունը թեմային*	
6.	Խմբի կատարողների մասնագիտական որակավորման համապատասխանությունը թեմային*	
7.	Ֆինանսական արդյունավետությունը	
8.	Արդյունքների գործնական կիրառելիությունը	
9.	Ուսումնական գործընթացում արդյունքների կիրառելիությունը	
10.	Կատարման ժամանակացույցի հիմնավորվածությունը	
11.	Հայտի համապատասխանությունը մրցույթի պահանջներին	
12.	Նախահաշվի հիմնավորվածությունը	
	Ընդամենը	

*Գնահատվում է ՀՊՏՀ ,,Ամբերդ,, հետազոտական կենտրոնի խորհրդի կողմից:

4.4. Հայտը գիտական փորձաքննության է ենթարկվում համապատասխան նախարարության և մեկ անկախ փորձագետի կողմից: Յուրաքանչյուր Հայտի համար փորձագետը լրացնում է «Ամբերդ» հետազոտական կենտրոնի կողմից սահմանված գիտական փորձաքննության գնահատման թերթիկը՝ պատասխանելով դրանում առաջադրված բոլոր հարցերին: Խմբի ղեկավարի և կատարողների մասնագիտական որակավորումը գնահատվում է «Ամբերդ» հետազոտական կենտրոնի Խորհրդի կողմից, որը կազմում է գնահատման սանդղակի առավելագույն միավորի մինչև 15 տոկոսը:

4.5. Հայտի գիտական փորձաքննության վերջնական գնահատականը երկու փորձագիտական գնահատականների միջին թվաբանականի և Խորհրդի գնահատականի գումարն է: Եթե այդ գնահատականը փոքր է գնահատման սանդղակի առավելագույն միավորի 50 տոկոսից, ապա հայտը մերժվում է:

4.6. Երկու փորձագետների գնահատականները գնահատման սանդղակի առավելագույն միավորի 50 տոկոս և ավելի չափով տարբերվելու դեպքում նախապատվությունը տրվում է նախարարությանը կամ հայտը տրվում է երրորդ փորձագետին՝ գիտական փորձաքննության: Այդ դեպքում, գիտական փորձաքննության վերջնական գնահատականը երեք փորձագետների երկու իրար մոտ գնահատականների միջին թվաբանականն է: Առաջին երկու փորձագետների գնահատականների և երրորդ փորձագետի գնահատականի հավասար տարբերությունների դեպքում գիտական փորձաքննության վերջնական գնահատականը երկու առավելագույն գնահատականների միջին թվաբանականն է:

4.7. Գիտական փորձաքննությունը կազմակերպող և իրականացնող անձանց կողմից Հայտերի բովանդակության, գիտական փորձաքննության ընթացքի և արդյունքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրումն արգելվում է:

4.8. Խորհուրդը ՀՊՏՀ ռեկտորին է ներկայացնում Հայտերի գնահատականների վերջնական վարկանիշային ցանկը:

4.9. ՀՊՏՀ ռեկտորը, ելնելով համալսարանի բյուջեից գիտական հետազոտությունների (թեմատիկ) ֆինանսավորման համար հատկացումների չափից, որոշում է շեմային գնահատականը, որին հավասար կամ դրանից բարձր գնահատված գիտական թեմաները երաշխավորվում են ֆինանսավորման: Ռեկտորը հաստատում է գիտական թեմաների

ցանկն ու դրանց ղեկավարների ցուցակը՝ նշելով յուրաքանչյուր գիտական թեմայի կատարման համար նախատեսվող հատկացման չափը:

4.10. Հետազոտական թեմայի կատարման ընթացքը բաժանվում է 3 փուլերի և հետազոտական խմբի վարձատրությունը իրականացվում է յուրաքանչյուր փուլի կատարողականի վերաբերյալ համապատասխան նախարարության և «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ծրագրի տնօրենի դրական եզրակացության առկայության պայմաններում:

Հավելված N 2

Հաստատված է <<ԱՄԲԵՐԴ>> հետազոտական
կենտրոնի խորհրդի կողմից
արձանագրություն 2, «26 »դեկտեմբերի 2014թ.

ՀՀ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ «ԱՄԲԵՐԴ» ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՆԵՐՔԻՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ

Հայտը հանձնված է «_____» _____ 2015 թ.

Ծածկագիր՝ _____

(լրացվում է հանձման ժամանակ)

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

Հայտի վերնագիրը (15 բառից ոչ ավելի՝ հայերեն)

_____

Հուշող (բանալի) բառեր (հայերեն)

_____

Հայտի ղեկավարի ազգանունը, անունը, հայրանունը

_____

ծննդյան տարեթիվը _____
գիտական աստիճանը _____
պաշտոնը _____
հեռախոսը _____
էլեկտրոնային հասցեն _____

Թեմայի կատարման համար անհրաժեշտ ժամանակահատվածը _____
Գիտահետազոտական խմբի (ներառյալ ղեկավարը) անդամների թիվը _____
Աշխատանքի վարձատրության (ներառյալ գործատուի պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները) գումարը _____ հազար դրամ
Վերադիր ծախսերի գումարը _____ հազար դրամ
Հայցվող ընդհանուր գումարը _____ հազար դրամ
Հայտի ղեկավարի ստորագրությունը _____
ՀՊՏՀ «ԱՄԲԵՐԴ» հ/կ տնօրենի ստորագրությունը _____

«____» _____ 2015 թ.

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԹԵՄԱՅԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ (1- 2 էջ)

I. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ (6-8 էջ)

II. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

(Հայտում պարտադիր է մանրամասնել՝ հետազոտության ուղղությունները և վերլուծության ենթակա ցուցանիշների համախումբը; տեղեկատվության հավաքման, մշակման, կանխատեսումների և որոշումների կայացման համար անհրաժեշտ գործիքների համախումբը)

III. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՄԲ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ (1-2 էջ)

IV. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՁԵՎԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

(Հստակ ներկայացնել հետազոտության փուլերի նկարագիրը, յուրաքանչյուր փուլի ակնկալվող արդյունքները և կատարման ժամկետը)

h/h	Հետազոտության ընթացիկ և ավարտական փուլերում կատարվող աշխատանքների նկարագիրը	Ակնկալվող արդյունքը	Կատարման ժամկետը
1 փուլ			
2 փուլ			
3 փուլ			
Ավարտական հաշվետվություն			

V. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԹԵՄԱՅԻ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

Հ/h	Պաշտոնի անվանում	Աշխատավարձ և սոցիալական ապահովության վճարներ (հազար դրամ)	Հաստիքների քանակ	Ընդհանուր աշխատավարձ (հազար դրամ)
1.				
2.				

VI. ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԹԵՄԱՅԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎ

Հ/h	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման ծավալները (հազ. դրամ)
1.	Աշխատավարձ և սոցիալական ապահովության վճարներ	
2.	Տնտեսական ծախսեր	
3.	Այլ ծախսեր, այդ թվում՝ ա) բ) նյութեր և միջոցներ, գ) գործուղումներ, դ) դաշտային աշխատանքներ, -------	
4.	Ընդամենը	

Հետազոտական թեմայի ղեկավար՝ _____ _____

(ստորագրություն) (Ա.Ա.Հ.)

«____» _____ 2015 թ.

ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

1.Ազգանուն, անուն, հայրանուն _____

2. Ծննդյան տարեթիվն ու ծննդավայրը _____

3. Կրթությունը (բուհը,

մասնագիտությունը)_____

_____

4. Գիտական աստիճանը _____

5. Վերջին թեզի ծածկագիրը, պաշտպանության տարեթիվը և վայրը

Հրատարակված է

- գիտական հոդվածներ (թիվը)
- մենագրություններ (թիվը)
- արտոնագրեր (թիվը)

6.Վերջին հինգ տարիներին հետազոտության թեմային առնչվող հրապարակումների վերնագիրը, ամսագիրը, տարեթիվը, էջերը

1

2

3

ավելացնել՝ ըստ անհրաժեշտության

_____

7. Ստացված դրամաշնորհները

Ղեկավարի ստորագրությունը _____

«____» _____ 2015 թ.

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ[1]

Ազգանուն, անուն, հայրանուն	
Ծննդյան տարեթիվը և ծննդավայրը	
Կրթությունը (բուհը, մասնագիտությունը)	
Գիտական աստիճանը	
Վերջին թեզի ծածկագիրը, պաշտպանության տարեթիվը և վայրը	
Աշխատանքի վայրը և պաշտոնը	
Հեռախոսը (աշխատանքի, տան, բջջային)	
Էլեկտրոնային հասցեն	
Նշել հետազոտության թեմային առնչվող վերջին 5 տարիների հրապարակումների վերնագիրը, ամսագիրը, տարեթիվը, էջերը	
1. 2. 3.	

[1] Լրացվում է յուրաքանչյուր կատարողի համար